

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԲՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ  
ՁԱՐԳԱՅՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ 2010  
ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

**Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացված աշխատանքները «Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010թ. ծրագրի» շրջանակներում**

2010 թվականի ընթացքում «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ) կողմից ձեռնարկված քայլերն ուղղված են եղել ՓՄՁ ոլորտի զարգացման համար մշակված ծրագրերի և պետական աջակցության համապատասխան միջոցառումների իրականացմանը, վերջիններիս իրագործման մեխանիզմների կատարելագործմանը, ինչպես նաև նոր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2010 թվականի ծրագրի իրականացման համար 2010թ. պետական բյուջեից նախատեսված 150,0 մլն ՀՀ դրամից հատկացվել է 150 մլն ՀՀ դրամ: Բացի այդ, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել է շուրջ 122 մլն ՀՀ դրամ:

**2010 թվականի ընթացքում** Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից ՓՄՁ պետական աջակցության 2010 թվականի ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդման, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ուղղություններով **աջակցություն է ցուցաբերվել 3,766 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտի**, որոնցից **1,136-ն** աջակցություն են ստացել ծրագրային մի քանի ուղղություններով: 2010 թվականին աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 73.2%-ը (2,758 ՓՄՁ սուբյեկտ) Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից աջակցություն են ստացել առաջին անգամ: Ընդհանուր առմամբ Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից վերը նշված ուղղություններով **բավարարվել է 8379 աջակցության հայտ:**

Տրամադրված աջակցության ուղղություն	2010թ. ընթացքում բավարարված աջակցության հայտերի թվաքանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	6872
Ուսուցողական աջակցություն	1266
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	130
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	30
Թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդման աջակցություն	49
ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսի մասնակի սուբսիդավորում	3
Վարկային երաշխավորությունների տրամադրում	13
ՉԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	16
<b>Ընդամենը</b>	<b>8379</b>

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 21.2 %-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 78.8%-ը՝ ՀՀ մարզերում, որոնցից 71.3%-ը գործում են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի տեղակայման քաղաքներից դուրս գտնվող հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 29.7%, ծառայությունների ոլորտում՝ 27.4%, առևտրի ոլորտում՝ 38.3%, շինարարության ոլորտում՝ 4.2%:

# 1. ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ամրապնդում

2010 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կենտրոնական գրասենյակի և մարզային մասնաճյուղերի նյութատեխնիկական ապահովվածության մակարդակի բարձրացման, մարզային մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման, ինչպես նաև իրականացվող ծրագրերում գործընկեր կազմակերպությունների ներգրավման ուղղությամբ:

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի գործընկեր կազմակերպությունների ընտրության նպատակով տեղի ունեցած մրցույթների արդյունքում ընտրվել են խորհրդատվական, ուսուցողական, ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնդմանն աջակցության ծրագրերն իրականացնող մասնագիտացված կազմակերպությունները: Մասնավորապես, որպես Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող ընկերություն ընտրվել է «Գրանթ Թորնթոն Ամիօ» ՍՊԸ-ն:

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի աշխատակիցները մասնակցել են Ավստրիայում, Բելգիայում, Ալբանիայում և Գերմանիայում կազմակերպված մի շարք դասընթացների, համաժողովների և հանդիպումների: Բացի այդ Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի աշխատակիցների համար կազմակերպվել են «Ֆինանսական վերլուծություն» և «Գործարար խորհրդատվություն» թեմաներով վերապատրաստման դասընթացներ:

2010 թվականին շարունակվել են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ում գործող «Թեժ գծի» միջոցով ստացվող դիմում-բողոքների, հարցումների և առաջարկությունների մշակման և սպասարկման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կենտրոնական գրասենյակում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ պարբերականությամբ կազմակերպվել են հանդիպումներ մարզային մասնաճյուղերի տնօրենների և մարզերում առանձին ծրագրային ուղղությունների համար պատասխանատու աշխատակիցների հետ իրականացվող ծրագրերի մեխանիզմների պարզաբանման, իրականացվող ծրագրերի ընթացքի վերլուծության և մարզերում ՓՄՁ զարգացման հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքները քննարկելու և դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի կողմից ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների, տեղական ինքնակառավարման մարմինների, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների, բանկերի և գործարարության հետ առնչվող այլ կառույցների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացվող աջակցության ծրագրերը, դրանցից օգտվելու ընթացակարգերը, ինչպես նաև ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է իրենց գործունեությանն առնչվող տեղեկատվական նյութեր և անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն:

Սեպտեմբերի 10-ին Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի և Բուլղարիայի ՓՄՁ զարգացման գործակալության միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր երկու կառույցների միջև համագործակցության վերաբերյալ: Փոխըմբռնման հուշագիրը նպատակ ունի

Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մասնաճյուղերի ցանցը



Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի և Բուլղարիայի ՓՄՁ զարգացման գործակալության միջոցով աջակցելու հայկական և բուլղարական ՓՄՁ-ների միջև երկկողմ համագործակցության զարգացմանը և գործընկերային հարաբերությունների ընդլայնմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մշակվել է և ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն է ներկայացվել «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում» տեխնիկական համագործակցության ծրագիրը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ուսումնասիրել և ներդնել ճապոնիայի փորձը տեղական տնտեսական զարգացման ուղղությամբ, ինչպես նաև միջազգային փորձագետների համակարգմամբ իրականացնել փորձնական ծրագիր:

## 2. ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

### 2.2.1 ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիր

2010 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 63.5 մլն ՀՀ դրամի երաշխավորություն 13 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով 136.3 մլն ՀՀ դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 13 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է 171.3 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկի միջին գումարը կազմել է 10.5 մլն ՀՀ դրամ, վարկային երաշխավորության միջին գումարը՝ 4.8 մլն ՀՀ դրամ, տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը՝ 16.1%: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորությունների երաշխիքով միջին ապահովվածությունը կազմել է 42.8%: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի (6), Ինտեկոբանկի (3), Հայբիզնեսբանկի (2), Արդշինինվեստբանկի (1), Անելիք բանկի (1) միջոցով: Տրամադրված երաշխավորությունների թիվն ըստ մարզերի կազմում է. Լոռու մարզում՝ 2, Կոտայքի մարզում՝ 1, Շիրակի մարզում՝ 5, Վայոց Ձորի մարզում՝ 2, Սյունիքի մարզում՝ 2, Արմավիրի մարզում՝ 1:

2010թ.-ի ընթացքում վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում աջակցություն ստանալու հայտեր են ներկայացրել 23 ՓՄՁ սուբյեկտ: Ստացված հայտերի դասակարգումն ըստ հաջորդական փուլերի ներկայացված է ստորև.

/հատ/

<b><u>Բավարարված և վարկային երաշխավորություն ստացած հայտեր<sup>1</sup></u></b>	<b><u>13</u></b>
<b><u>Բանկերի կողմից նախնական և վարկային կոմիտեով մերժված հայտեր<sup>2</sup></u></b>	<b><u>2</u></b>
<b><u>Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից մերժված և լրացուցիչ պարզաբանման ուղարկված հայտեր</u></b>	<b><u>4</u></b>

1 Բավարարված հայտերից երկուսը ընդունվել է 2009 թվականին:

2 Բանկերի կողմից մերժված երկուսը ընդունվել է 2009 թվականին:


3.Շահառուների կողմից հրաժարված 1 հայտը ընդունվել է 2009թվականին:

<i>Շահառուների կողմից ներկայացված հայտեր, որոնք հետագայում հրաժարվել են վարկավորվելուց<sup>3</sup></i>	2
<i>Ընթացիկ փուլում գտնվող հայտեր</i>	7
<b>Ընդհանուր հայտերի քանակը</b>	<b>23</b>

Վարկային երաշխավորությունների ծրագրի շրջանակներում 2004-2010 (առ 01.12)թթ. ընթացքում տրամադրվել է 1.51 մլրդ ՀՀ դրամի երաշխավորություն 370 ՓՄՁ սուբյեկտի՝ ապահովելով շուրջ 2.8 մլրդ ՀՀ դրամի վարկային փաթեթ: Աջակցություն ստացած 370 ՓՄՁ սուբյեկտների վարկային պարտավորության ընդհանուր չափը կազմել է շուրջ 3.5 մլրդ ՀՀ դրամ:

**ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի ցուցանիշները**

*Վարկային երաշխավորություն ստացած ՓՄՁ սուբյեկտների ոլորտային բաշխվածքը*



***Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի***

Մարզ	Քանակ	Վարկ	Վարկային պարտավորություն	Երաշխավորություն	Ապահովվածության %	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկետայնություն (ամիս)
Արմավիր	1	11.000.000	14.316.348	10.000.000	69.85%	18%	36
Լոռի	2	14.000.000	16.965.691	11.180.000	65.03%	15%	30
Կոտայք	1	30.000.000	38.504.952	5.000.000	12.98%	17%	36
Շիրակ	5	24.300.000	30.993.575	10.900.000	40.7%	16.7%	36
Սյունիք	2	17.000.000	21.081.566	8.765.300	42.9%	15%	36
Վայոց Ձոր	2	40.000.000	49.406.635	17.606.650	38.4%	15%	36
Ընդամենը	13	<b>136.300.000</b>	<b>171.268.767</b>	<b>63.451.950</b>	<b>42.8%</b>	<b>16.1%</b>	<b>35</b>

***Տրամադրված երաշխավորություններն ըստ տարիների***

*/նյն դրամ/*

	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Երաշխավորություն	25.5	197.6	342.2	375.7	213	246.5	63.5
Վարկ	47.3	366.1	628.1	722.7	391.1	435.2	136.3

***Տրամադրված երաշխավորություններն ըստ գործընկեր բանկերի***

<b>Բանկ</b>	<b>Քանակ</b>	<b>Վարկ</b>	<b>Վարկային պարտավորություն</b>	<b>Երաշխավորություն</b>	<b>Ապահովվածության %</b>
<b>ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ</b>	6	62.800.000	80.608.522	22.400.000	33.6%
<b>Ինեկո բանկ</b>	3	20.000.000	24.559.610	13.680.000	54.3%
<b>Հայքիզնեսբանկ</b>	2	40.000.000	49.406.635	17.606.650	38.4%
<b>Արդշինհնվեստ բանկ</b>	1	8.000.000	9.850.000	6.265.300	63.6%
<b>Անելիք բանկ</b>	1	5.500.000	6.844.000	3.500.000	51.1
<b>Ընդամենը</b>	<b>13</b>	<b>136.300.000</b>	<b>171.268.767</b>	<b>63.451.950</b>	<b>42.8%</b>

***2.2.2 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագիր***

ՀՀ Կառավարության 14.07.05թ.-ի «Հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերի ցանկերը սահմանելու մասին» թիվ 1017-Ն որոշմամբ սահմանված բնակավայրերում «Վարկային տոկոսների մասնակի սուբսիդավորման միջոցով ՓՄՁ վարկավորման խթանման» փորձնական ծրագրի շրջանակներում 2010թ-ի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ են ներկայացվել սուբսիդավորման 5 հայտ՝ Տավուշի մարզից, որոնցից բավարարվել են 3-ը: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կկազմի շուրջ 1.077 հզ. ՀՀ դրամ:

Ծրագրի ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի գործունեության արդյունքում ձևավորված եկամուտների հաշվին և կիրառվում է որպես ՓՄՁ վարկավորման խթանման լրացուցիչ գործիք: Ծրագրի իրականացումը չի կրում լայնածավալ բնույթ:

***2.2.3 Սեփական կապիտալի ֆինանսավորման ծրագիր***

2010թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները «Սեփական կապիտալի ֆինանսավորման» ծրագրի շրջանակներում 2009 թվականին ֆինանսավորում ստացած «Սորսիո» ՓԲԸ-ի, «Մարկետինգ ընդ Մենեջմենթ 360» ՓԲԸ-ի և «Գոլդեն գոուֆ» ՓԲԸ-ի 2009 թվականի գործունեության արդյունքների ամփոփման ուղղությամբ իրականացման ուղղությամբ:

Սկսած 2010 թվականից սեփական կապիտալի ֆինանսավորման ծրագիրն իրականացվում է «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից:



**3. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն**

Հաշվետու ժամանակաշրջանում «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» 9 ծրագիր<sup>2</sup> է (այսուհետ՝ Ծրագիր) իրականացվել հանրապետության մարզերում:

2 Ծրագրերն իրականացվել են ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան, ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան, ՀՀ Շիրակի մարզի Արթիկ, ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան, ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքներում «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ համատեղ ծրագրի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ նշված վայրերում ծրագրին մասնակցելու համար դիմել են 297 սկսնակ գործարարներ, որոնցից ընտրվել և ծրագրին մասնակցել են 130-ը: Ծրագրի մասնակիցներից 32-ը կամ 24.6%-ը արդեն իսկ ստացել է պետական գրանցում և սկսել է սեփական գործը, 9-ը կամ 6.9%-ը՝ գրանցման փուլում են, 89-ը կամ 68.5%-ը՝ գտնվում են գործարար գաղափարի զարգացման փուլում:

Ընդհանուր առմամբ, ծրագրի շրջանակներում, 2010 թվականի ընթացքում պետական գրանցում է ստացել և սկսել է սեփական գործը 34 սկսնակ գործարար, որոնցից 2-ը 2009թ. իրականացված ծրագրի մասնակիցներն են: Գ-րանցվածների գերակշիռ մասը՝ 32-ը, գրանցվել են որպես անհատ ձեռնարկատեր:



Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցում ստացած և գործունեություն ծավալած սկսնակ գործարարների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրության ոլորտում՝ 42.0%, ծառայությունների ոլորտում՝ 42.0%, առևտրի ոլորտում՝ 15%:

Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացածների մարզային բաշխվածքը հետևյալն է. Արագածոտն մարզում՝ 11, Արարատի մարզում՝ 13, Արմավիրի մարզում՝ 12, Գեղարքունիքի մարզում՝ 15, Լոռու մարզում՝ 18, Կոտայքի մարզում՝ 17, Ծիրակի մարզում՝ 15, Սյունիքի մարզում՝ 12 և Տավուշի մարզում՝ 17:

Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցության տրամադրման նպատակով ձևավորված դրամագլուխը 2010 թվականին համալրվել է «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագրի միջոցներից՝ 9.6 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 142.8 մլն ՀՀ դրամ:

Սկսնակ գործարարներին ֆինանսական ռեսուրսների ներգրավմանն աջակցության տրամադրման պայմաններն են.

<b>Սկսնակ գործարարներին ֆինանսական ռեսուրսների ներգրավմանն աջակցության տրամադրման պայմաններն են.</b>	
Գ-ումարը	<u>առավելագույնը 2 մլն դրամ</u>
Տարեկան տոկոսադրույքը	<u>12%</u>
Ժամկետը	<u>առավելագույնը 3 տարի</u>
Մարման կարգը	<u>անսակն հավասարաչափ մարումներ</u>
Գ-րավը	<u>Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող երաշխավորությունը (100%)</u>
Նպատակային խումբը	<u>սկսնակ գործարարներ</u>

Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 30 սկսնակ գործարար, այդ թվում՝ 5-ը 2009թ. իրականացված ծրագրի մասնակիցներն են: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 44.9 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 53.5 մլն ՀՀ դրամ: Վարկավորումն իրականացվել է գործընկեր ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկի միջոցով:

Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 1.8 մլն ՀՀ դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 1.5 մլն ՀՀ դրամ, որոնց վերադարձելիությունը կազմում է 100%:

**«Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» ծրագրի շրջանակներում տրամադրած ֆինանսական աջակցությունն ըստ մարզերի**

/ՀՀ դրամ/

<b>Մարզ</b>	<b>Քանակ</b>	<b>Վարկի չափը</b>	<b>Երաշխավորության գումարը</b>
Արագածոտն	2	3,900,000	4,665,698
Արարատ	5	8,373,000	9,909,229
Արմավիր	1	1,700,000	2,033,766
Գեղարքունիք	1	2,000,000	2,392,666
Լոռի	4	6,500,000	7,776,165
Կոտայք	3	3,160,000	3,780,415
Շիրակ	3	4,855,000	5,808,196
Սյունիք	2	3,300,000	3,945,860
Վայոց Ձոր	4	5,500,000	6,579,833
Տավուշ	5	5,563,500	6,655,801
<b>Ընդամենը</b>	<b>30</b>	<b>44,851,500</b>	<b>53,547,629</b>

ՀՀ մարզերում հյուրատնային գործունեության զարգացման նպատակով ՀՀ Վայոց Ձորի մարզում իրականացվել է «Հյուրատների կլաստերի զարգացման ծրագիրը»<sup>3</sup>, որին մասնակցել են հյուրատների և հյուրընկալության ծառայություններ մատուցող գործող և սկսնակ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ծրագրին մասնակցել են 71 շահառուներ Ջերմուկ, Վայք, Եղեգնաձոր քաղաքների և Մալիշկա գյուղի տարածաշրջանից, որոնք անցել են համապատասխան վերապատրաստում: Ծրագրի շրջանակներում մշակվել է կլաստերի զարգացման ռազմավարությունը և նախատեսվում է հիմնադրել մարքեթինգային կենտրոն: Ծրագրի մասնակիցներից 4-ը ստացել են պետական գրանցում և ներկայացվել են որակավորման՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման ընթացակարգի համաձայն:

**4. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջնորդմանն աջակցություն**


2010 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդմանն աջակցության նպատակով միջոցառումներ են իրականացվել ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման, վեբ կայքերի պատրաստման, սննդի անվտանգության կառավարման համակարգերի սերտիֆիկացման (ISO 22000:2005), ինչպես նաև ցուցահանդեսներին ՓՄՁ սուբյեկտների մասնակցության ապահովման ուղղությամբ: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է խորհրդատվական աջակցություն ապրանքների փաթեթավորման, ձևավորման, պիտակների մշակման գործընթացները օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան իրականացման ուղղությամբ:

Ծրագրի շրջանակներում աջակցություն է ստացել 49 ՓՄՁ սուբյեկտ: Բաշխումն ըստ աջակցության տեսակի հետևյալն է.

<b>Աջակցության տեսակը</b>	<b>ՓՄՁ սուբյեկտների թիվը</b>
• արտադրանքի փաթեթավորում, պիտակների մշակում, ձևավորում և գովազդ	39
• վեբ կայքերի պատրաստում	4
• ցուցահանդեսներին մասնակցություն	5
• կառ. ավտոմատ. համակարգի ներդրում	1
<b>Ընդամենը</b>	<b>49</b>

<sup>3</sup> Ծրագիրն իրականացվել է «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ՄԱԶԾ/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ համատեղ ծրագրի շրջանակներում:






Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ մարզերի հետևյալն է. Շիրակի մարզում՝ 3, Տավուշի մարզում՝ 2, Սյունիքի մարզում՝ 2, Լոռու մարզում՝ 6, Կոտայքի մարզում՝ 8, Արագածոտնի մարզում՝ 4, Գեղարքունիքի մարզում՝ 5, Արմավիրի մարզում՝ 1, Վայոց Ձորի մարզում՝ 7, Արարատի մարզում՝ 3, Երևան քաղաքում՝ 8:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրություն՝ 26.5%, ծառայություններ՝ 22.5% , առևտուր՝ 49% և կրթություն՝ 2%:

**5. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն**

2010թ. ընթացքում տեղեկատվական և խորհրդատվական աջակցության ծրագրերի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների, պահանջվող հումքի, նյութերի, սարքավորումների, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների վերաբերյալ տեղեկատվության որոնման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման, մաքսային ձևակերպումների ու հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև արտասահմանյան գործընկերների որոնման ու կապերի հաստատման ուղղություններով անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:



Նշված ուղղություններով հաշվետու ժամանակահատվածում բավարարվել է 6872 աջակցության հայտ, որից 21-ը՝ նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության շրջանակներում: Բավարարված աջակցություն հայտերի թվաքանակի բաշխվածքն ըստ մարզերի հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 992, Արարատի մարզում՝ 297, Արմավիրի մարզում՝ 217, Գեղարքունիքի մարզում՝ 347, Լոռու մարզում՝ 522, Կոտայքի մարզում՝ 1220, Շիրակի մարզում՝ 785, Սյունիքի մարզում՝ 364, Վայոց Ձորի մարզում՝ 740, Տավուշի մարզում՝ 331, Երևան քաղաքում՝ 1057:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրություն՝ 28,6%,

ծառայություն՝ 47,6%, առևտուր՝ 23.8%:

Հաշվետու ժամանակահատվածում նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցության շրջանակներում աջակցություն են ստացել 21 ՓՄՁ սուբյեկտ: Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ մարզերի հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 3, Լոռու մարզում՝ 1, Շիրակի մարզում՝ 3, Սյունիքի մարզում՝ 2, Տավուշի մարզում՝ 5, Երևան քաղաքում՝ 7: Աջակցությունը տրամադրվել է

մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով՝ ըստ ՓՄՁ սուբյեկտների կողմից ներկայացված հայտերի:

Աջակցության տեսակը	ՓՄՁ սուբյեկտների թիվը
• գործարար և ներդրումային ծրագրերի մշակում	4
• 2010 ֆինանսական տարվա հաշվապահական հաշվառման վարում և հարկային հաշվետվությունների պատրաստում	14
• Խորհրդատվություն զբոսաշրջային տան որակավորման կարգ ստանալու նպատակով	3
<b>Ընդամենը</b>	<b>21</b>

Հարկային օրենսդրությանը և հարկային վարչարարությանն առնչվող հարցերին պարզաբանում տրամադրելու նպատակով շարունակվել են աշխատանքները Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ում գործող «Թեժ գծի» և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ինտերնետային էջում ինտերակտիվ խորհրդատվության բաղադրիչի (ֆորումի) միջոցով գործարարներին խորհրդատվություն տրամադրելու ուղղությամբ: Գործարարներին հնարավորություն է ընձեռվել ներկայացնելու հարկային և մաքսային օրենսդրությանն առնչվող իրենց հուզող հարցերը/խնդիրները և ստանալ պարզաբանումներ դրանց վերաբերյալ, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ խորհրդատվական աջակցություն Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի գործող ընթացակարգերին համապատասխան:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ում գործող «Թեժ գծի» և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ինտերնետային էջում ինտերակտիվ խորհրդատվության բաղադրիչի (ֆորումի) միջոցով ստացվել է 381 հարցադրում: Ստացված հարցադրումներից 299-ն առնչվել են հարկային օրենսդրությանն ու վարչարարությանը, 53-ը՝ մաքսային օրենսդրությանն ու վարչարարությանը, 29-ը՝ ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող այլ բնագավառներին:


Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և տպագրվել է «Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցման ծրագրերի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների» տեղեկագրի վեցերորդ հրատարակությունը, «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2007-2009թթ.» տեղեկագիրը, «Ինչպես գրանցել Ձեր իզնետը» գործարար ուղեցույցի չորրորդ հրատարակությունը, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի տեղեկատվական գրքույկները և 2009 թվականի գործունեությունը լուսաբանող հաշվետվությունը:

2010 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ինտերնետային էջում գրանցվել է շուրջ 17,864 այցելություն, որից՝ 80.1%-ը Հայաստանից, իսկ 19.9%-ը՝ արտերկրներից և 134,080 էջի դիտում (page view), որից՝ 83.9%-ը Հայաստանից, իսկ 16.1%-ը՝ արտերկրներից:

2010թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեության լուսաբանման ուղղությամբ:

Մասնավորապես «h2» հեռուստարձկերությամբ եթեր է հեռարձակվել «ՓՄՁ լրատու» հաղորդաշարի երեսունհինգ հաղորդում (որից տասնմեկը՝ կրկնություն): Հաղորդումները մանրամասն ներկայացրել են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից տրամադրվող աջակցության ծրագրերը, ընթացիկ գործունեությունն ու կազմակերպված միջոցառումները:

Հաղորդումների ընթացքում ներկայացվել են մարզերում հյուրատների կլաստերի զարգացումները, հյուրատները Վայոց Ձորի մարզում, սկսնակ գործարարների գրանցած



հաջողությունները (Կոտայքի, Արագածոտնի մարզերում) և Armhotels.am առցանց ամրագրման համակարգի աննախադեպ հնարավորությունները:

Առանձին հաղորդումներով ներկայացվել են համագործակցությունն ու համատեղ միջոցառումները ՄԱԶԾ-ի, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Նիդերլանդների Թագավորության Միջազգային գործարարության և համագործակցության գործակալության (EVD) կողմից իրականացվող "Համագործակցության Չարգացում ծրագրի" (Development Cooperation Matchmaking Facility Programme/MMF Programme), "Մասնավոր հատվածի ներդրումային ծրագրի" (Private Sector Investment Programme (PSI)) հետ, Հայաստանի ՓՄՉ զարգացման ազգային կենտրոն հիմնադրամի և Բուլղարիայի ՓՄՉ զարգացման գործակալության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ Փոխըմբռնման հուշագրի ստորագրման ու համագործակցության արարողությունը, Հայաստանում Չեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեությունն ու մատուցվող ծառայությունները, «Շահահայ Էքսպո 2010» աննախադեպ ցուցահանդեսի ընձեռած հնարավորությունները, Ուկրաինայի Դոնեցկ քաղաքում տեղի ունեցած ցուցահանդեսը, Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի հետ համատեղ կազմակերպվող Առևտրի ֆինանսավորման ակադեմիայի պաշտոնական բացման արարողությունը:

Առանձին հաղորդումով ներկայացվել են «ՓՄՉ պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում տեղ գտած փոփոխությունները, մասնավորապես ՓՄՉ չափորոշիչների հստակեցումն ու զարգացումները:

Նոյեմբեր ամսին հաղորդումներից մեկը անդրադարձ է կատարել ՀՀ կառավարության որոշմանը, որով երկարաձգվել է տեսչական ստուգումների արգելքը մինչև 70 մլն շրջանառություն ունեցող ընկերություններում և մանրամասներ է ներկայացրել գործարարների համար տեսչություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի ներդրման մասին:

Բոլոր հաղորդումները տեղադրվել են նաև Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ-ի պաշտոնական կայք-էջի՝ [www.smednc.am](http://www.smednc.am) “Հեռուստահաղորդումներ” բաժնում:

Բացի հեռուստահաղորդումներից ԶԼՄ-երով բազմիցս ներկայացվել են Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ-ի գործադիր տնօրենի հարցազրույցները ՓՄՉ ոլորտի խնդիրների և Հայաստանի ՓՄՉ ԶԱԿ-ի գործունեության վերաբերյալ:

Մասնավորապես հոդվածներ ու հրապարակումներ են տպագրվել ինչպես մամուլում, տեղեկատվական գործակալությունների լրահոսում, այնպես էլ վերլուծական հաղորդումներում (ՀՀ կառավարության հաղորդաշար, «Հ1» հ/ը, «Հանրային ռադիո», «Առկա», «Արմինֆո», «Արմենպրես», «Մեդիամաքս», «Հայաստանի Հանրապետություն», «Առավոտ», «Голос Армении», «Կապիտալ», Photolur, Radiolur, [www.banks.am](http://www.banks.am), [www.finport.am](http://www.finport.am), [www.panorama.am](http://www.panorama.am), [www.banker.am](http://www.banker.am), [www.aysor.am](http://www.aysor.am), [www.hayernaysor.am](http://www.hayernaysor.am), [www.panarmenian.net](http://www.panarmenian.net), [www.b24.am](http://www.b24.am), [www.news.am](http://www.news.am), «Էկոնոմիկա» և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում ամիսը մեկ անգամ պարբերականությամբ գործարարները տեղեկացվել են Չեռնարկությունների Եվրոպական Ցանցի նորություններին «Էլեկտրոնային Ամսագրի» միջոցով, որտեղ մանրամասն ներկայացվել են ինչպես գործարար առաջարկները, այնպես էլ տարբեր երկրներում կայանալիք միջոցառումները:

## 6. ՓՄՉ սուբյեկտներին ուսուցողական աջակցության ծրագիր

2010 թվականի ընթացքում «ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումները», «ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումները», «Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում», «Կադրային գործավարություն», «Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ», «Մաքսային ընթացակարգեր» և «Հաշվապահական հաշվառում» թեմաներով կազմակերպված 44 դասընթացներին մասնակցել են ՓՄՉ սուբյեկտների 1266 ներկայացուցիչ, այդ թվում՝ տնտեսական դաշտին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ ՓՄՉ սուբյեկտներին իրազեկման և պարզաբանման նպատակով ՓՄՉ սուբյեկտներին

ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների 694 ներկայացուցիչ, որոնք մասնակցել են հաշվապահական կենտրոնում կազմակերպված 27 դասընթացների, իսկ ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխությունների վերաբերյալ ՀՀ բոլոր մարզերում գործող ՓՄՁ սուբյեկտների համար «Բաց դռների» սկզբունքով կազմակերպված թվով 20 ուսուցողական/տեղեկատվական բնույթի միջոցառումներին մասնակցել են ՓՄՁ սուբյեկտների 541 ներկայացուցիչներ:

Դասընթացների հիմնական թեմաները	Մասնակիցների թիվը
• ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումները	971
• ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումները	50
• Ֆինանսական և հարկային հաշվետվությունների պատրաստում	44
• Հաշվապահական հաշվառում	2
• «Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ»	126
• «Կադրային գործավարություն»	22
• «Մաքսային ընթացակարգեր»	50
• Սկսնակ հաշվապահների պատրաստում, տնտեսական իրավունք և ֆինանսական կառավարում	1
<b>Ընդամենը</b>	<b>1266</b>

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխվածքն ըստ մարզերի հետևյալն է. Արագածոտնի մարզում՝ 46, Արարատի մարզում՝ 22, Արմավիրի մարզում՝ 26, Գեղարքունիքի մարզում՝ 77, Լոռու մարզում՝ 68, Կոտայքի մարզում՝ 85, Շիրակի մարզում՝ 65, Սյունիքի մարզում՝ 48, Վայոց Ձորի մարզում՝ 54, Տավուշի մարզում՝ 78 , Երևան քաղաքում՝ 697:

Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների բաշխումն ըստ գործունեության ոլորտների հետևյալն է. արտադրություն՝ 6 (28,6%), ծառայություն՝ 10 (47,6%), առևտուր՝ 5 (23.8%):

## 7. Ձեռնարկությունների Եվրոպական ցանց (Enterprise Europe Network)

Հաշվետու ժամանակահատվածում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աշխատանքներ են իրականացվել Հայաստանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման, հայաստանյան և արտասահմանյան ձեռնարկությունների միջև գործարար կապերի հաստատման, գործարար համագործակցության հիմնապաշարի համալրման, ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման, համագործակցության ընդլայնման, տեղեկատվության փոխանակման և այլ ուղղություններով:

Նպատակ ունենալով այս նախաձեռնության շրջանակներում ընձեռված հնարավորությունները հասանելի դարձնել հնարավորինս մեծ թվով փոքր և միջին ձեռնարկությունների համար՝ 2010 թվականի ընթացքում Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնը Հայաստանում (ՁԵՑՀԿՀ) համագործակցելով գործարար ասոցիացիաների և միջազգային կազմակերպությունների հետ, կազմակերպել է ՁԵՑ-ի գործունեությունը և ընձեռած հնարավորությունները ներկայացնող մի շարք հանդիպումներ և քննարկումներ՝ գործարարների շրջանում ՁԵՑ-ի գործունեության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման և շահառուների թվի ավելացման նպատակով:

ՁԵՑ-ի հաղորդակցման կենտրոնի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն է տարածվել նաև Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի «ՓՄՁ լրատու» հեռուստահաղորդաշարի միջոցով և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի վեբ կայքի միջոցով, որտեղ հաշվետու

ժամանակահատվածում տեղադրվել են 35 նոր գործարար համագործակցության առաջարկներ, ինչպես նաև 10 տեխնոլոգիական առաջարկներ ու հարցումներ՝ ուղղված հայաստանյան գործարարներին:

Մշակվել և գործարարների շրջանում տարածվել է ՁԵՑ-ի Հայաստանում հաղորդակցման կենտրոնի էլեկտրոնային նորությունների պարբերականի 12 նոր համար (որոնցից վերջին 4-ը նաև հայերեն լեզվով), որի վերջին համարի հասցեատերերի քանակը գերազանցում է 800-ը: Պարբերականը պարունակում է տեղեկատվություն՝ հաղորդակցման կենտրոնի գործունեության, գործարար համագործակցության առաջարկների և արտերկրում նախատեսվող գործարար միջոցառումների վերաբերյալ: Պարբերականի 11-րդ և 12-րդ համարներում բացի գործարար առաջարկներից, տեղ են գտել տեխնոլոգիական առաջարկներ ու հարցումներ՝ արտերկրներից: Պարբերականը հիմնականում տարածվում է գործարարների, գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների, գործարար միությունների և ասոցիացիաների շրջանակներում:

Ձեռնարկությունների միջև գործարար համագործակցության հաստատման նպատակով ՁԵՑ-ի գործարար համագործակցության հիմնապաշարում տեղադրվել են Հայաստանում գործող ևս 16 ՓՄՁ սուբյեկտների գործարար համագործակցության նկարագրեր: Ներկայումս 2 գործարար առաջարկ գտնվում է մշակման փուլում:

Ընդհանուր առմամբ ՁԵՑ գործարար հիմնապաշարում Հայաստանից ներկայացված են 57 ՓՄՁ սուբյեկտների գործարար համագործակցության նկարագրերը, որոնց նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել Իտալիայի, Պորտուգալիայի, Բուլղարիայի, Շվեդիայի, Սլովենիայի, Լիտվայի, Ռուսաստանի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Իսպանիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Կիպրոսի և Թուրքիայի կազմակերպություններ: Արդեն իսկ 67 գործարարների միջև փոխանակվել են կոնտակտային տվյալներ և բանակցություններ են ընթանում համագործակցության հաստատման ուղղությամբ:

Ներկայումս բանակցություններ են ընթանում SS ոլորտի հայկական «e-works» ՍՊԸ-ի և իտալական, խորվաթական, սերբական, գերմանական, բելգիական և սլովենական SS ընկերությունների, «Ակնատուր» ՍՊԸ-ի և բուլղարական "Detelinite", ինչպես նաև հունգարական "Leveles Szalloda es Vendeglato" Kft, հայկական "F.B.P.-M.S. Diamond" ՍՊԸ-ի ու պորտուգալական "Carlos & Manuel", ինչպես նաև սլովենական iTatu skupina d.o.o. ընկերությունների միջև՝ համագործակցության հաստատման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել է 1 գործարար համագործակցություն՝ հայկական «Սուրեն Հովակիմյան» ՍՊԸ-ի և ամերիկյան «Սիներամա Ջուելրի» ընկերության միջև: Հաստատվել է ևս 1 համագործակցության համաձայնագիր՝ բժշկական հետազոտությունների բնագավառում՝ իտալական Kos genetics ընկերության և հայկական «Կանխարգելման սրտաբանական կենտրոն-բարեկամ» ՍՊԸ միջև:

Ձեռնարկությունների Եվրոպական Յանցի գործունեության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում հանդիպում է կազմակերպվել Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամում՝ հայկական "E-works" SS ընկերության և Ամստերդամում գործող որոշ SS ընկերությունների միջև: Նշված հանդիպման արդյունքում ներկայումս ընթանում են բանակցություններ՝ համագործակցության հաստատման ուղղությամբ:

Գործարարների կողմից ներկայացվող պահանջներին համապատասխան՝ ՁԵՑ-ի միջոցով պարբերաբար փոխադարձ հարցումներ են կատարվում և պարզաբանում են ստանում հարցեր՝ կապված հարկային և մաքսային օրենսդրության, սերտիֆիկացման պահանջների և սերտիֆիկատ տրամադրող կազմակերպությունների, ապրանքների արտահանման և ներմուծման ընթացակարգերի, սարքավորումների ձեռքբերման, մատակարարների և այլնի վերաբերյալ:

Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացման ուղղված ծրագրերի կատարելագործման նպատակով ցանցի գործընկեր կազմակերպությունների միջոցով հարցումներ են կատարվում տարբեր երկրներում գործող ՓՄՁ աջակցության ծրագրերի, ոլորտում գործող օրենսդրության, չափորոշիչների և ընթացակարգերի վերաբերյալ:

ՁԵՑ-ի անդամ կազմակերպությունների միջև կապերի հաստատման և համագործակցության ընդլայնման նպատակով սույն թվականի Հուլիսի 14-17-ը Եվրոպական Հանձնաժողովի «Մրցունակության և Նորարարության Գործադիր

Գործակալության» (EACI) կողմից կազմակերպվել է հանդիպում ցանցի անդամ կազմակերպությունների մասնակցությամբ, ինչպես նաև հոկտեմբերի 13-15-ը կազմակերպվել է ՁԵՅ-ի տարեկան համաժողովը, որտեղ ապահովվել է նաև հայաստանյան ներկայացուցչի մասնակցությունը:

Հաշվետու ժամանակահատվածում «Եվրոպական Հանձնաժողովի Մրցունակության և Նորարարության Գործադիր Գործակալության» կողմից հաստատվել է Հայաստանում Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի Հաղորդակցման կենտրոնի 2011-2012թթ. աշխատանքային ծրագիրը:

**8. Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում**

Իրականացվող ծրագրային ուղղություններով նախատեսված միջոցառումների ընդլայնման նպատակով 2010 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ը շարունակել է համատեղ ծրագրեր մշակել և իրականացնել Միացյալ Ազգերի Չարգացման Ծրագրի (UNDP), Ձեռնարկությունների Եվրոպական ցանց (Enterprise Europe Network), Հոլանդական «Համագործակցության Չարգացում» ծրագրի (EVD) հետ:

**Միացյալ Ազգերի Չարգացման Ծրագիր (UNDP)**

«Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» ծրագրի կողմից հաշվետու ժամանակահատվածում աշխատանքները կատարվել են «Կլաստերների զարգացում և սկսնակ գործարարների բիզնես գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացում», «Կենտրոնական և ռեգիոնալ մակարդակներում ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում» և «ՓՄՁ աջակցության մեխանիզմների զարգացում և ՓՄՁ ՉԱԿ հնարավորությունների հզորացում» բաղադրիչների շրջանակներում նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ:

«Կլաստերների զարգացում և սկսնակ գործարարների բիզնես գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացում» բացադրիչի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության 9 ծրագրեր (ՀՀ Արարատի, Սյունիքի, Լոռու, Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերում): Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսական աջակցություն են ստացել առավել իրատեսական գործարար ծրագրեր ներկայացրած 30 սկսնակ գործարար: Ստացված վարկերի ընդհանուր գումարը կազմել է մոտ 44.9 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի երաշխավորությունը՝ 53.5 մլն դրամ:

Այս բաղադրիչի շրջանակներում ՀՀ Վայոց Ձորի մարզում իրականացվել է Հյուրատների կլաստերի զարգացման ծրագիրը:

Սույն բաղադրիչի շրջանակներում մշակվել են նաև նոր բիզնես մոդելներ Տավուշի և Լոռու մարզերի համար, իրականացվել է նաև այդ մոդելների ներդրման ծրագիրը:

«Կենտրոնական և ռեգիոնալ մակարդակներում ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների տրամադրում» բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է աջակցություն տրամադրել Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ գործունեությունը լուսաբանող տեղեկատվական միջոցառումների իրականացման նպատակով: Այս միջոցառումները ենթադրում են հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում ամիսը երեք անգամ ՀՀ հեռուստաալիքով: Հաղորդումները ներկայացնում են Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ հիմնական գործունեության ուղղությունները, ներառյալ մարզային մասնաճյուղերի գործունեությունը, ինչպես նաև ՓՄՁ ոլորտի ընթացիկ զարգացումները: Այս միջոցառումը իրականացվելու է մինչև 2010թ. վերջ:

Նշված բաղադրիչի շրջանակներում նախատեսվել է իրականացնել նաև Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ, ներառյալ

համապատասխան գովազդային հոլովակների պատրաստում և հեռարձակում հանրային հեռուստատալիքներից մեկով, ինչպես նաև ռադիոյով, և նախկինում տեղակայված գովազդային վահանակների նորացում: Համապատասխան աշխատանքներն ավարտված են:

Սույն բաղադրիչի շրջանակներում մշակվել և հրատարակվել են տեղեկատվական նյութեր ՓՄՁ-ների համար, ներառյալ ՓՄՁ ընդհանուր տեղեկատվական գրքույքը հայերեն և անգլերեն լեզուներով, «Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ հաշվետվությունը 2009թ.» հայերեն և անգլերեն լեզուներով և 2010թ. հարկային օրացույցը:

Այս բաղադրիչի շրջանակներում տրամադրվել են խորհրդատվական ծառայություններ և մշակվել են գործարար ծրագրեր Եվեյցարիայից վերադարձած քաղաքացիների համար, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ միջև «Եվեյցարիայից ՀՀ քաղաքացիների վերադարձի աջակցման ծրագրի» իրագործման շրջանակներում կնքված փոխհամաձայնության հուշագրի իրականացմանը աջակցության տրամադրելու նպատակով:

Սույն բաղադրիչի շրջանակներում իրականացվել է ագրոբիզնեսի ներկայացուցիչ ՓՄՁ-ներին արտահանման խթանման գործառնությունների կազմակերպման ծրագիրը:

Բացի այդ, «Աջակցություն շուկայում ապրանքների առաջնորդման հարցում» բաղադրիչի շրջանակներում ՓՄՁ ՉԱԿ շահառու հանդիսացող 22 ՓՄՁ-ների համար պատրաստվել են գովազդային վահանակներ, ներառյալ դիզայնը, պատրաստումը և տեղադրումը Հայաստանի բոլոր մարզերում:

### **Հոլանդական «Համագործակցության Չարգացում» ծրագիր (EVD)**

2010թ. ընթացքում Միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության (EVD) կողմից իրականացվող «Համագործակցության Չարգացում» ծրագրի (Development Cooperation Matchmaking Facility Programme/MMF Programme) շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից աշխատանքներ են տարվել ծրագրի վերաբերյալ տեղեկատվության տարածման, ինչպես նաև Հայաստանում տարբեր ոլորտներում գործող փոքր և միջին ձեռնարկություններին ծրագրի մեջ ներգրավելու ուղղությամբ, ինչի արդյունքում 9 ՓՄՁ սուբյեկտներ ծրագրի մեջ են ներգրավվել համաձայն սահմանված չափանիշների և ընթացակարգերի: Ծրագիրն իրականացնող լիազորված փորձագետների կողմից հանդիպումներ են կազմակերպվել ծրագրի մասնակցությանը դիմող վերը նշված ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս ծրագրին հետագա մասնակցությունն ապահովելու նպատակով: Ծրագրի փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում 1 տեղական ընկերությանը («ԻՆՄԻ» ՓԲԸ) նույնպես շնորհվեց վաուչերի ըստ սահմանված կարգի:

2010թ. մարտի 30-ին Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի և Միջազգային գործարարության և համագործակցության հոլանդական գործակալության համատեղ կատարվող միջոցառումների շրջանակներում հիմնադրամի երևանյան կենտրոնական գրասենյակում կազմակերպվեց «Համագործակցության Չարգացում» ծրագրի (MMF Programme) և «Մասնավոր հատվածի ներդրումային ծրագրի» (PSI Programme) ներկայացումը, որը անցկացվեց հատուկ Նիդերլանդներից ժամանած ծրագրերի պատասխանատու մասնագետների և Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի համապատասխան փորձագետների կողմից:

Ներկայացմանը ներկա գտնվեցին Երևանում և Հայաստանի մարզերում տարբեր ոլորտներում գործող մոտ 20 գործարարներ, ինչպես նաև Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի մարզային մասնաճյուղերի ներկայացուցիչներ: Ներկայացման արդյունքում գործարարները հետաքրքրություն արտահայտեցին ծրագրին մասնակցելու համար: Ներկայումս Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից աշխատանքներ են տարվում գործարարների մասնակցությունը ծրագրին ապահովելու համար՝ սահմանված ընթացակարգերի և չափորոշիչների համաձայն:

Ընդհանուր առմամբ 2008-2010թթ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների արդյունքում ծրագրում ներգրավվել են Հայաստանում

գործող 48 ՓՄՁ սուբյեկտներ, որից 11-ի նկատմամբ հետաքրքրություն են ցուցաբերել հոլանդական գործարարները և նշված կազմակերպությունները ստացել են վաուչերներ ըստ սահմանված ընթացակարգերի: Ծրագրի շրջանակներում EVD գործակալության կողմից տրամադրված վաուչերները հնարավորություն են ընձեռել հայ գործարարներին հանդիպել պոտենցիալ հոլանդացի գործընկերների և հոլանդական խորհրդատվական ընկերությունների մասնագետների հետ տեղում ձեռնարկությունների գործունեության ուսումնասիրության և հնարավոր համագործակցության ուղիների նախանշման նպատակով: Ծրագրում ընդգրկված այլ հայկական գործարարների համար, որոնք անցել են նախնական ընտրությունը, պոտենցիալ հոլանդական գործընկերների որոնման աշխատանքները ընթացքի մեջ են:

### **Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ)**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացվել Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ) հետ համագործակցության հաստատման ուղղությամբ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցել Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից իրականացվող «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրի կատարելագործման ուղղությամբ: «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության» ծրագրի իրականացման արդյունավետության բարձրացման, ծավալների ընդլայնման, միջոցների խնայման և ճկունության ապահովման նպատակով նախատեսվում է հետագայում ծրագիրն իրականացնել նաև Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի ռեսուրսներով: Մասնավորապես, 2011թ. ընթացքում GTZ-ի աջակցությամբ կիրականացվի Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի համապատասխան աշխատակիցների վերապատրաստում CEFЕ (Competency based Economies through Formation of Enterprises) մեթոդաբանությամբ և 2 լրացուցիչ փորձնական ծրագրի իրականացում ՀՀ նախապես ընտրված մարզերում:

### **Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագիր**

Աշխատանքներ են իրականացվել ԵՄ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ENPI) ներքո իրականացվող «Սևծովյան ավազանի երկրների 2007-2013 թվականների համատեղ գործողությունների ծրագրի» շրջանակներում: Մասնավորապես Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից Հունաստանի, Մոլդովայի և Բուլղարիայի հետ համագործակցությամբ ներկայացվել է «Հյուրըկալության կլաստերի ձևավորում և ինտեգրում Սևծովյան ավազանի գյուղական համայնքներում» ծրագրային առաջարկը, ևս 6 ծրագրերում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ը մասնակցում է որպես գործընկեր: Ծրագրերի արդյունքները կհայտարարվեն 2011թ. սկզբին:

### **Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն**

2010թ. ընթացքում Հայաստանի ՓՄՁ ՉԱԿ-ի կողմից մշակվել է և Ճապոնիայի Միջազգային Համագործակցության Գործակալություն է ներկայացվել «Տեղական արտադրության զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջնորդում» տեխնիկական համագործակցության ծրագիրը: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ուսումնասիրել և ներդնել Ճապոնիայի փորձը տեղական տնտեսական զարգացման ուղղությամբ, ինչպես նաև միջազգային փորձագետների համակարգմամբ իրականացնել փորձնական ծրագիր: Համաձայն նախնական արդյունքների ծրագիրն անցել է նախնական ընտրության փուլը: